«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 80 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

30.09.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Վերին Խոտանան բնակավայրում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 80 տեղ հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիոլոգ Մարի Ջավահիրյանը, «ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊ ընկերության տնօրենը, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Անդրանիկ Հովակիմյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ Հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի **2024 թվականի օգոստոսի 28-ի թիվ 143 (7144) համարում**, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում: Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշման 21-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ կարող էին ներկայացնել, ծանուցումից հետո **20** աշխատանքային օրվա

ընթացքում: Տեղեկացնեմ, որ մինչ այսօր հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ,առաջարկություններ և կարծիքներ չեն ներկայացվել:

Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊ ընկերության տնօրեն Արսեն Քլջյանին:

Զեկույց (Արսեն Քլջյան) – Բարև Ձեզ: Վերին Խոտանան բնակավայրի գոյություն ունեցող դպրոցի փոխարեն նախատեսվում է կառուցել 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոց և 80 տեղ/հզորությամբ մանկապարտեզ: Դպրոցը հագեցած է լինելու կահույքով և համապատասխան գույքով: Նկուղային հարկում նախատեսվում է ապաստարան: Գյուղում կոյուղու բացակայության պատճառով նախատեսվում է կառուցել մաքրման կայան: Այլ ինֆորմացիա այս պահին չենք կարող տրամադրել, մինչև նախագծային աշխատանքները վերջացնենք, 2-րդ փուլում արդեն մանրամասն կներկայացնենք ինչ է լինելու: Նաև կառուցվելու է դրսի խաղահրապարակ:

Հարց (Անդրանիկ Հովակիմյան) – Նախորդ հանրային քննարկման ժամանակ Ծավի դպրոցի հետ կապված հարց հնչեց ջրամատակարարման վերաբերյալ և ինչքան գիտեմ տեխնիկական պայման եք պահանջել համայնքից ջրամատակարարման համար: Ի՞նչ ծավալի ջրօգտագործում է իրականացվելու, որ խնդիրներ չառաջանան դպրոցի հետ կապված, կամ նման դեպքում լրացուցիչ ռեզերվուար նախատեսվո՞ւմ է:

Պատասխան (Արսեն Քլջյան) – Ռեզերվուար նախատեսվում է, ռեզերվուար կառուցվելու է: Ջրապահանջի հաշվարկ այս պահին չեմ հիշում ինչքան է եղել, բայց ներկայացրել ենք ջրապահանջի հաշվարկը: Չբավարարելու դեպքում ջրի ռեզերվուար է կառուցվելու:

Հարց (Մարի Ջավահիրյան) – Իսկ գործող դպրոցի տարածքո՞ւմ է կառուցվում, թե՞ նոր տեղ կա հատկացված:

Պատասխան (Արսեն Քլջյան) – **Ոչ, գ**ործող դպրոցի տարածքում է կառուցվում, գործող դպրոցի տեղում է կառուցվելու նորը: Այսինքն՝ դպրոցը քանդվելու է և նորը կառուցվի:

Հարց (Մարի Ջավահիրյան) – Ջեռուցումը միայն արևա՞յին:

Պատասխան (Արսեն Քլջյան) – Ջեռուցումը միայն հոսանքով է լինելու, արևային կայան է տեղադրվելու ըստ տարածքի: Եթե թույլ տվեց տարածքը ամբողջ հզորությամբ

Lnupu&pnul fitrlputr hLtupur{np !ftttft l.lmbrluap{f :

տեղադրել, ապա ամբողջ հզորությամբ էլ կտեղադրվի: Եթե ոչ, ապա արդեն տարածքում ինչքան հնարավոր կլինի կտեղադրվի:

Մեջբերում (Անդրանիկ Հովակիմյան) – Տարածքն իմ կարծիքով մեծ է:

Պատասխան (Արսեն Քլջյան) – Այո Վերին Խոտանանում հնարավորություն կա ամբողջությամբ տեղադրել:

Հարց (Մարի Ջավահիրյան) – Իսկ երկու դպրոցների տիպային նախագծերը նո՞ւյնն են:

Պատասխան (Արսեն Քլջյան) – Այո, երկու դպրոցներն էլ տիպային նույն նախագծերն են: Այստեղ մանկապարտեզը 80 տեղ/հզորությամբ է, սակայն երկուսն էլ տիպային նույնն են:

Պատասխան (Անդրանիկ Հովակիմյան) – Շատ լավ: Այլ հարցե՞ր: Շնորհակալություն եմ հայտնում հանրային լսման մասնակիցներին և հանրային լսումը համարենք կայացած:

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գլուխ և
բնապահ. բաժնի պետ **Անդրանիկ Հովակիմյան**

Նախաձեռնող՝
«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈ» ՓԲԸ տնօրեն **Ջավադ Սաիդի**